

ՀԱՇՎԱՐԿ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ստեփանակերտի ներքաղաքային երթուղիներն սպասարկող ավտոբուսի

p. Ստեփանակերտ

<<20>> *օգոստոս 2014թ.*

Ի կատարումն Ստեփանակերտի քաղաքապետի հանձնարարականի և լրումն մրցութային հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 20-ի N01/08 արձանագրության, Ստեփանակերտի քաղաքապետի 2013 թվականի փետրվարի 13-ի թիվ 228Ա որոշմամբ սահմանված ներքաղաքային երթուղիների հատկացման մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) կատարելով համապատասխան իրավական ու տնտեսական ուսումնասիրություններ և վերլուծություններ, կազմել է սույն հաշվարկ-հիմնավորումը:

Համաձայն Ստեփանակերտի քաղաքապետի 2012 թվականի փետրվարի 20-ի թիվ 246Ա որոշմամբ հաստատված Ստեփանակերտ քաղաքի ավտոբուսային երթուղիների չվացուցակների՝ մայրաքաղաքի ավտոբուսային երթուղիները սպասարկող մեկ միավոր տրանսպորտային միջոցի օրական միջին վազքը կազմում է 200 կմ, մեկ միավոր ավտոբուսի աշխատանքային օրերը կազմում են ամսական 25 օր:

Ուսումնասիրելով 2010 թվականի ապրիլի 1-4, հուլիսի 2-14, 2011 թվականի օգոստոսի 16-22, 2013 թվականի փետրվարի 14-18 և սեպտեմբերի 12-16-ն ընկած ժամանակահատվածները ու քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի կողմից կազմակերպված ուղևորահոսքի հետազոտման արդյունքները, որոնց կազմակերպումն ու վերահսկումն իրականացվում էր մրցութային հանձնաժողովի անդամների կողմից, հանձնաժողովը պարզեց, որ օրական մեկ ավտոբուսի կողմից փոխադրված (տեղափոխված) ուղևորների միջին թիվը (ուղևորաշրջանառությունը) կազմում է 650 ուղևոր:

I. ՎԱՌԵԼԻՔԻ ԾԱԽՍ

Ստացված տվյալների համաձայն մեկ ավտոբուսի օրական դիզելային վառելիքի ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q_H = 0,01 \cdot H_s \cdot S (1 + 0,01 \cdot D) + H_{om} \cdot T,$$

որտեղ՝

- Q_H -վառելիքի նորմատիվային ծախսն է (լիտր)
- H_s -վառելիքի տրանսպորտային (բազային) նորման է (լիտր)
- S -ավտոբուսի վազքն է (կմ)
- D -ուղղիչ գործակիցն է (հավելումը) (լիտր)

- *Տ*-վառելիքի ծախսի նորման է ուղևորասրահի անհատական ջեռուցիչի օգտագործման դեպքում (լիտր/ժամ)

- *T*-ավտոբուսի աշխատանքի ժամանակահատվածն է միացրած ջեռուցիչով Այսպիսով՝

$$Q_H = 0,01 * 19,5 * 200 * (1 + 0,01 * 10) = 39 * 1,1 = 42,9 \text{ լիտր}$$

$$\text{Դրամական ծախս՝ } 42,9 * 480 = \underline{\underline{20592 \text{ դրամ}}}$$

II. ՎԱՌԵԼԻՔԱՔՍՈՒԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Վառելիքաքսուկային նյութերի (շարժիչի, փոխանցման տուփի, հետին կամրջակի, հիդրավլիկ փոխանցումների համակարգի յուղեր և հովացման համակարգի հեղուկներ) ծախսերը հաշվարկվում է ելնելով դիզելային վառելիքի ծախսից հետևյալ բանաձևով՝

$$Q_X = Q_H * X / 100$$

որտեղ՝ *X* վառելիքաքսուկային նյութի ծախսի նորման է 100 լիտր դիզելավառելիքի հարաբերությամբ, որոնք դիզելային շարժիչների համար սահմանված են

-շարժիչի յուղեր՝ 3.2

- տրանսմիսիոն և հիդրավլիկ յուղեր՝ 0.4

- հատուկ յուղեր և հեղուկներ՝ 0.1

-թանձր յուղեր (քսուկներ)՝ 0.3

$$Q_X = 42,9 * 3,2 / 100 = 1,37, \quad 1,37 * 3000 = 4110 \text{ դրամ}$$

$$42,9 * 0,4 / 100 = 0,171 \quad 0,171 * 2800 = 478,8 \text{ դրամ}$$

$$42,9 * 0,1 / 100 = 0,0429 \quad 0,0429 * 2200 = 94,38 \text{ դրամ}$$

$$42,9 * 0,3 / 100 = 0,1287 \quad 0,1287 * 2000 = 257,4 \text{ դրամ}$$

$$\text{Այսպիսով՝ } Q_X = 4110 + 478,8 + 94,38 + 257,4 = \underline{\underline{4941 \text{ դրամ}}}$$

III. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ

Տեխնիկական սպասարկումն ու նորոգումներն իրենց մեջ ներառում են բոլոր տեսակի՝ սեզոնային, պլանային, ընթացիկ ու կապիտալ (SU1, SU2 և ընթացիկ) նորոգումները, որոնց իրականացման ուղեցույցը տրված է արտադրող գործարանի տեխնիկական ու երաշխիքային պայմաններում:

Տեխնիկական սպասարկումների ծախսերը հաշվարկվում են կամ Մոսկվայում 2005 թվականին գիտական խմբի կողմից մշակված ու հրապարակված

«Ուիլսոնրափոխադրումների ծախսերի և սակագների որոշման մեթոդական առաջարկներ»-ում բերված գործակիցներով կամ փոխադրողների կողմից փաստացի կատարված ծախսերով: Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ավտոբուսների ներկրման օրվանից առ այսօր կատարված ծախսերն ու տեխնիկական սպասարկումների պարբերականությունը, որից ելնելով հաշվարկվեց վերոնշյալ երկու տարբերակները՝

1) համաձայն ձեռնարկի յուրաքանչյուր ավտոբուսի դասի համար սահմանված է տեսակարար կշռի միջինացված գործակից, որի համաձայն ավտոբուսի արժեքի նկատմամբ այն բազմապատկվում է և արդյունքում ստանում ենք տարեկան տեխսպասարկումների համար նախատեսված գումարը՝

Ավտոբուսի գինը՝ 16000000 դրամ,

Տեսակարար կշիռը 0.16

$SU=16000000*0,16=2560000/365=7013,7$ դրամ օրական

2) փոխադրողների կողմից 2011-2014 թվականներն ընկած ժամանակահատվածում կատարված տեխսպասարկման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը՝ փոխադրողների մոտ ամսական մեկ ավտոբուսի համար կատարվել են 128000-145000 դրամ տեխսպասարկման ծախսեր, որոնց հիմնավորող փաստաթղթերից հստակ երևում է, որ կան հողվածներ, որոնք չեն պահպանվել արտադրողի կողմից սահմանված վազքի ցուցանիշները: Հետևաբար հանձնաժողովը որոշոց մեկ ավտոբուսի 1000կմ վազքի համար սահմանել 20000 դրամ, որպես SU հաշվարկի ցուցանիշ: Այս դեպքում ունենում ենք հետևյալ պատկերը՝

$SU=200*20000/1000=4000$ դրամ օրական

Ելնելով վերը նշվածներից հանձնաժողովը հիմք է ընդունել 2-րդ տարբերակով հաշվարկված ցուցանիշը:

IV. ԱՆՎԱԴՆՈՂԵՐԻ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն արտադրող գործարանի կողմից սահմանված տվյալների HYUNDAI County մակնիշի ավտոմեքենայի անվադողերի չափսերը 7.00R16 են, շահագործվող քանակը 6 հատ, որոնց առավելագույն շահագործական վազքը 60000 կմ է: Անվադողի արժեքը, համաձայն պաշտոնական ներկայացուցիչ համարվող ընկերության կողմից հանձնաժողովի հարցմանը տված գնացուցակի, կազմում է 80000 դրամ՝ ՀՀ տարածքում:

Անվադողերի մաշվածության նորման որոշվում է հետևյալ բանաձևով՝

$H_2=90/Hվզք$

որտեղ Hվզք-շահագործական նորման է սահմանված արտադրողի կողմից՝ 1000 կմ համար:

Իվզք-ի նկատմամբ շահագործման պայմաններից ու առանձնահատկություններից ելնելով, կիրառվում են ուղղիչ K1 և K2 գործակիցները, որտեղ K1=1, իսկ K2=0.95 կապված քաղաքային պայմաններում հաճախակի կանգառների ու թափառքի հետ:

$$H_{վզք}=60000*0.95=57000 \text{ կմ}$$

$$H_2=90/57=1,578$$

Հետևաբար 1 կմ համար

$H_2=(0.01*1.578*80000*6)/1000=7,574*200=1514,9$ դրամ օրական վազքի համար:

V. ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ

Շահագործվող ավտոբուսների վրա օգտագործվում են թվով 2 հատ 12V90A տիպի ակումյատորային մարտկոցներ, որոնց փոխարինման համար հիմք են ընդունվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 713 որոշմամբ հաստատված N3 հավելված, նմանատիպ այլ տեխնիկական նորմեր: ՌԴ տրանսպորտի և կապի նախարարության կողմից սահմանված մարտկոցների շահագործման ժամկետը 2 տարի է: Կուտակչային մարտկոցի շուկայական արժեքը կազմում է 45000 ՀՀ դրամ, հետևաբար մարտկոցների փոխարինման համար մեկ օրվա ծախսը կկազմի՝ $90000/730=123,3$ դրամ:

VI. ԱՄՈՐՏԻԶԱՑԻՈՆ ԾԱԽՍԵՐ

Ավտոտրանսպորտային միջոցների տարեկան ամորտիզացիոն մասհանումները հաշվարկում են ավտոբուսի արժեքից՝ առանց վազքի հաշվառման: «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետը 5 տարի է: Հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 36 որոշմամբ սահմանված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության կարգը, մրցույթի արդյունքներով փոխադրող կազմակերպությունների հատկացվում են առավելագույնը 6-7 տարի ժամկետով, ուստի հիմք է ընդունվում 8 տարի ամորտիզացիոն մասհանման ժամկետը:

Այսպիսով 1 օրվա ամորտիզացիոն մասհանման ծախսը կկազմի՝

$$U=16000000/8/300=6666,7 \text{ դրամ:}$$

VII. ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ (ՎԵՐԱԴԻՐ) ԾԱԽՍԵՐ

Ուղևորափոխադրումների ոլորտում վերադիր ծախսերն իրենց մեջ ներառում է նախաերթային կազմակերպման ու պլանավորման աշխատանքների (վարորդների ամենօրյա բուժզննում, նախաերթային փաստաթղթերի կազմում, վարչական մարմինների ու աշխատակազմերի գործունեության կազմակերպում, կազմակերպության վարչակազմի աշխատանքի վարձատրության, կոմունալ ծառայությունների և այլն) իրականացման համար փաստացի կատարված ծախսերը: Համաձայն կատարված ուսումնասիրությունների, 2 կազմակերպությունների ամսական վարչական ծախսերը տատանվում են 4000000-ին մինչև 6000000 դրամ գումարը: Միաժամանակ, համաձայն գործող նորմերի, նմանատիպ արժեք ունեցող ավտոբուսների համար տարեկան ընդունվում են 7-10 % վարչատնտեսական ծախսեր: Ստեփանակերտի ներքաղաքային ավտոբուսների պարկը համալրված է 35 նոր ավտոբուսներով (ներառյալ պահուստային շարժակազմը): Օրական կտրվածքով շահագործվում են թվով 28 ավտոբուս, ամսվա կտրվածքով մեկ ավտոբուսն աշխատում է 25 օր:

1-ին տրաբերակով հաշվարկելիս վարչական ծախսերը օրական կազմում են՝
 $4000000/28/30.4=4699,2$ դրամ

2-րդ տրաբերակով՝
 $16000000*8\%/300=4266,7$ դրամ

Հանձնաժողովի կողմից ընդունվում է 2-րդ տրաբերակը:

VIII. ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՉ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» և «Եկամտային հարկի մասին» օրենսգրքի պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով չվացուցակով սահմանված ավտոբուսի աշխատանքի ժամանակահատվածը, կարելի է եզրակացնել, որ մեկ ավտոբուսի ղեկավարման համար անհրաժեշտ են նվազագույնը 2 վարորդ (ինչի դեպքում ևս չի պահպանվում օրենսգրքով սահմանված առավելագույն աշխատաժամանակը): Մեկ վարորդի ամսական աշխատավարձի չափը (ներառյալ եկամտային հարկի 21%) 189900 դրամ է, ուստի այն մեկ օրվա համար կկազմի՝

$189900*2/30.4=12493,4$ դրամ

IX. ՀԱՐԿԵՐ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

Կանոնավոր ուղևորափոխադրումների ոլորտում հարկերի ու այլ վճարների (այստուհետ՝ հարկեր) չափերը որոշելիս հիմնվում են՝ Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության «Հաստատագրված վճարների մասին», «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին», «Գույքահարկի մասին» «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգությունն ապահովելու մասին» օրենքների պահանջների, ինչպես նաև այլ իրավական ակտերի պահանջների վրա: Վերը նշվածներից էլնելով մեկավտոբուսի օրական հարկերի մեծությունները կկազմեն՝

Հաստատագրված վճար՝ 1980 դրամ

Ավտոճանապարհային մասհանում՝ 1300դրամ

ԱՊՊԱ վճար՝ 131,5 դրամ

Գույքահարկ (տեխզննում և պետտուրք)՝ 160դրամ

Ծառայության դիմաց վճար՝ 550 դրամ

Ընդամենը հարկեր ու այլ վճարներ՝ **4121.5** դրամ:

Ճ. ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ուղևորափոխադրումների ոլորտում շահութաբերությունն ընդունված է հաշվարկել ծախսերի 20-25%, սակայն հանձանժողովի անդամների ձայների մեծամասնությամբ այն հաշվարկվում է 15%-ի չափով, այսինքն՝

Մեկ օրվա ծախսերի ընդհանուր գումարը կկազմի՝

$$A=20592+4941+4000+1514.9+123.3+6666.7+4266.7+12493.4+4121.5=58718.8$$

դրամ

$$58718.8*15\%=8807.7 \text{ դրամ}$$

$$\text{ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝ } 58718.8+8807.7=67526.5 \text{ դրամ}$$

ԱՅՍՊԻՍՈՎ՝

$$\text{ՄԵԿ ՈՒՂԵՎՈՐԻ ՓՈԽԱՂՄԱՆ ԳԻՆԸ ԿԼԻՆԻ՝ } 67526.5/650=103,88 \text{ դրամ:}$$

ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ

հհ	Անվանումը	Գումարը /ՀՀ դրամ/	Ծանոթություն
1	Վառելիքի ծախս	20592	Հաշվարկված չեն ձևեռային ու ջեռուցիչի հավելումները
2	Վառելիքա քսուկային նյութեր	4941	
3	SU և ԸՆ	4000	Հաշվարկված է նվազագույն չափանիշով
4	Անվադողերի մաշվածություն	1514.9	
5	Կուտակչային մարտկոցի փոխարինում	123.3	
6	Ամորտիզացիոն մասհանում	6666.7	8 տարվա կտրվածքով
7	Վարչատնտեսական ծախսեր	4266.7	
8	Վարորդների աշխատավարձ	12493,4	Ներառյալ եկամտային հարկը
9	Հարկեր ու այլ վճարներ	4121.5	
Ընդամենը		58718.8	
10	Շահույթ 15%	8807.7	Հաշվարկված է նվազագույնը /այլ պետություններում 35%/
ԸՆԴՀԱՆՈՒՐ		67526.5*	
ՄԵԿ ՈՒՂԵՎՈՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԳԻՆԸ		103,88 դրամ	

***- Ծանոթություններ՝**

-Հաշվարկներում ներառված չեն որպես ծախս վարկային միջոցների տոկոսադրույքները կամ ֆինանսական ռիսկի ապահովագրավճարները (նոր ավտոբուսների ձեռք բերման համար փոխադրողները կատարել են 528,0 մլն դրամ գումարի ներդրում),

-Չեն հաշվարկվել տոմսային համակարգի ներդրման ու շահագործման հետ կապված ծախսերը,

- Չի նախատեսվել հետագա տարիների գնաճը:

Թվարկված ծախսերը հաշվարկելու դեպքում մեկ ուղևորի փոխադրման գինը (տոմսի արժեքը) կկազմի 110-120 դրամ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՅՔ ԷԶԵՐԸ

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ԼՂՀ օրենք

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք

«Եկամտային հարկի ամսին» ԼՂՀ օրենք

«Գույքահարկի մասին» ԼՂՀ օրենք

«Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենք

«Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» ԼՂՀ օրենք

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին»,

«Ճանապարհային երթևեկության անվտանգությունն ապահովելու մասին»

«Աշխատանքային օրենսգիրք»

«Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենք

«Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենք

ԼՂՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 36 որոշմամբ հաստատված կարգ

ԼՂՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 713 որոշմամբ սահմանված նորմեր

Գիտական խմբի կողմից մշակված, Մոսկվայում 2005 թվականին հրապարակված «Ռեզոլուցիոն փոխադրումների ծախսերի և սակագների որոշման մեթոդական առաջարկներ»

«Ռեզոլուցիոն ավտոմոբիլային փոխադրումների տեխնոլոգիա, կազմակերպում և կառավարում» Հեղինակ Ադալտ Հովհաննիսյան 2006 թ.

«HYUNDAI COUNTY» ավտոբուսի արտադրող գործարանի տեխնիկական պահանջներ

www.hyundai.ru

www.mintrans.ru

www.consultant.ru

www.yerevan.am

